ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 ապրիլի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

48
(3257)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՆԻ ԸՆՏՐՈՂ ԿԱ ՀՀ–ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը ստացել է ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պաշտոնական գրությունը, որտեղ ներկայացված է 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ընտրությունների ընտրողների թվի վերաբերյալ տեղեկությունը:

Պաշտոնական փաստաթղթում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2026թ. հունիսի 7-ին կայանալիք ընտրությունների ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքն ըստ մարզերի եւ Երեւան քաղաքի վարչական շրջանների» կցվում է գրությանը:

Ըստ այդ տեղեկանքի՝ ընտրողների ընդհանուր թիվը կազմում է 2 489 031:

Մարզերով պատկերն այսպիսին է.

- Արագածոտն - 113 302
- Արարատ - 220 058
- Արմավիր - 224 696
- Գեղարքունիք - 178 402
- Լոռի - 213 703
- Կոտայք - 238 979
- Շիրակ - 209 519
- Սյունիք - 101 648
- Վայոց ձոր - 43 751
- Տավուշ - 101 695

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց ՔՊ նախընտրական ցուցակի 102-րդ համարում ընդգրկված Անուշիկ Ավետյանի պաշտոնական հայտարարագիրը եւ հարակից տվյալները: Ավետյանը 2025 թվականի ապրիլի 2-ին նշանակվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարարի տեղակալ: Մինչ այդ, ինչպես պարզեց «Ժողովուրդ»-ը, 2021 թվականին նա զբաղեցրել է փոխվարչապետ Տիգրան Ավինյանի օգնականի պաշտոնը: Հայտարարագրի համաձայն՝ Ավետյանը ունի Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող կիսակառույց շինություն, որի 1/2 բաժնեմասը ձեռք է բերել 2019 թվականի հունիսի 11-ին՝ գնման միջոցով: Նրա բանկային ավանդները կազմում են 110,000 եւ 60,000 ԱՄՆ դոլար, իսկ բանկային հաշիվների մնացորդները՝ 941,500 դրամ: Կանխիկ միջոցներ չի հայտարարագրել: Ինչ վերաբերում է եկամուտներին, «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ հաշվետու ժամանակահատվածում նա ստացել է ընդհանուր 4,107,317 դրամ: Դրանցից 217,715 դրամը՝ «ԱՄՉԱՄ ՕՓԵՐԵՅՇԸՆՍ» ընկերությունից, 487,968 դրամը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, իսկ մնացածը՝ այլ աշխատավարձային մուտքերից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Չնայած նրան, որ հայրենի խորհրդարանում ամեն բան անում են, որպեսզի ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի նախագծերը մերժեն, հակառակ դրան՝ նա նոր նախագիծ է «բերել»՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին: Նախագծով առաջարկվում է օրենքում ամրագրել «էլեկտրոնային հարթակ» հասկացությունը եւ սահմանել, որ նման հարթակներով իրականացվող ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների դեպքում միջնորդավճարները չեն կարող գերազանցել ծառայության արժեքի 10 տոկոսը: Հիմնավորման մեջ նշվում է, որ վերջին տարիներին շուկան կտրուկ փոխվել է, եւ պատվերների հիմնական մասը կատարվում է բջջային հավելվածներով, ինչի արդյունքում այդ հարթակները դարձել են շուկա մուտք գործելու հիմնական գործիք եւ զգալի ազդեցություն ունեն վարորդների եկամուտների վրա: Գործնականում ձեւավորվել է իրավիճակ, երբ միջնորդավճարները հաճախ հասնում են 20-30 տոկոսի, ինչը հանգեցնում է վարորդների մաքուր եկամուտների նվազմանը եւ շուկայում անհավասարակշռության:

⇨ *էջ 3*

ՄԻԵԴ-ն Ադրբեջանին պարտավորեցրել է մինչեւ օգոստոսի 31-ը տրամադրել գերիների դատավճիռները. այս մասին հայտնում են «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ից. «Ադրբեջանը շարունակաբար դիմում է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ խնդրելով վերացնել միջանկյալ միջոցը, որով Ադրբեջանը պարտավորվում է պարբերաբար հաշվետվություն ներկայացնել Ադրբեջանում պահվող հայ գերիների պահման պայմանների, նրանց առողջական վիճակի մասին: Ադրբեջանը հավաստիացնում է, որ բոլոր գործընթացներն ընթանում են թափանցիկ եւ հրապարակային: ՄԻԵԴ-ը 2026թ. ապրիլի 9-ին մերժել է Ադրբեջանի հերթական դիմումը՝ Ադրբեջանի կառավարությանը կրկին պարտավորեցնելով շարունակել տրամադրել տեղեկություններ կալանավորվածների պահման պայմանների, ինչպես նաեւ նրանց վերջին բժշկական քարտերի ու իրականացված բժշկական հետազոտությունների եւ բուժման վերաբերյալ այլ փաստաթղթերի մասին: ՄԻԵԴ-ը պարտավորեցրել է նաեւ ներկայացնել հայ գերիների դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում կայացված դատավճիռների պատճենները կամ այդ դատավճիռների ամփոփագրերը, որոնք պետք է ներառեն դատավճիռ կայացրած դատավորների հիմնավորումները՝ գործում առկա ապացույցների վրա հիմնված: Զեկույցի ներկայացման հաջորդ վերջնաժամկետը 2026 թ. օգոստոսի 31-ն է»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԱՆԽՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՎ»

ArmLur.am-ը զրուցել է «Ազգային ժողովրդավարական բեւեռ» քաղաքական խորհրդի անդամ Ժիրայր Սեֆիլյանի հետ:



- Պարոն Սեֆիլյան, համապետական ընտրություններին ինչպիսի՞ մասնակցություն եք ունենալու, ի՞նչ գաղափարներով եւ առաջարկներով եք ներկայանալու, եւ ինչո՞ւ պետք է ընտրողը նախապատվությունը տա Ազգային ժողովրդավարական բեւեռին:

- Ամիսներ շարունակ մենք փորձել ենք գտնել այնպիսի լուծում, որի արդյունքում հնարավոր կլիներ ազատվել գործող իշխանություններից, որոնք, մեր համոզմամբ, երկիրը տանում են թուրքացման ճանապարհով:

Մեր առաջարկած բանաձեւն այն էր, որ նախկին նախագահները պետք է մի կողմ քաշվեին, եւ ձեւավորվեր չեզոք թեկնածուի շուրջ համախմբում, որը կղեկավարեր կարճ անցումային փուլը: Այդ թեկնածուի շուրջ պետք է միավորվեին բոլոր այն ուժերը, որոնք մերժում են երկրի թուրքացման ընթացքը: Ցավոք, դա տեղի չունեցավ: Քաղաքական դաշտում պառակտվածությունն ու անլրջությունը խոչընդոտեցին այդ միասնությանը: Սակայն, անկախ ամեն ինչից, մենք որոշեցինք չմնալ այս պայքարից դուրս եւ մասնակցել ընտրություններին:

Մենք երկար տարիներ եղել ենք ազատագրական պայքարի մեջ, եւ տարբեր ժամանակներում ամեն ինչ արվել է, որպեսզի մեր նման ազգային ուժերը դուրս մղվեն քաղաքական դաշտից: Սակայն մենք ոչ միայն մնացել ենք, այլեւ այսօր պատրաստ ենք կրկին մասնակցել ընտրություններին: Մեր ակնկալիքն այն է, որ այս անգամ հնարավոր կլինի մուտք գործել Ազգային Ժողով: Կարծում եմ՝ դրա հավանականությունն այսօր ավելի մեծ է, քան նախորդ ընտրություններում՝ հատկապես հաշվի առնելով գործող համակարգի խորացող ճգնաժամը:

- Համապետական ընտրություններում Բեւեռի վարչապետի թեկնածուն լինելու է Վարուժան Ավետիսյանը, որը ներկայումս գտնվում է կալանքի տակ: Ինչպե՞ս եք պատկերացնում նրա մասնակցությունը ընտրություններին:

- Վարուժան Ավետիսյանը եղել է մեր թեկնածուն նաեւ նախորդ ընտրություններում: Այս անգամ նրա թեկնածությունը ոչ միայն քաղաքական, այլ նաեւ խորհրդանշական նշանակություն ունի: Դրա միջոցով մենք նաեւ քաղաքական ուղերձ ենք հղում՝ ցույց տալով, որ բանտարկություններով հնարավոր չէ որոշել, թե ով պետք է մասնակցի քաղաքական գործընթացներին: Միաժամանակ, այս անգամ մեր ցուցակի անցողիկ հատվածում լինելու են երիտասարդ գործիչներ: Առաջիկա օրերին մենք կհրապարակենք ցուցակը, որտեղ կլինեն նաեւ նոր անուններ:

- Քաղաքական դաշտում կա տեսակետ, որ եթե նախկին նախագահները մասնակցեն ընտրություններին, ապա դա կարող է նպաստել Նիկոլ Փաշինյանի վերարտադրմանը: Ի՞նչ եք կարծում:

- Գործող իշխանությունները մշտապես օգտագործում են նախկինների թեման՝ անցյալը հիշեցնելու եւ սեւ-սպիտակ քաղաքականություն վարելու համար: 2021 թվականին այդ մարտավարությունը նրանց հաջողվեց: Սակայն կարծում եմ, որ այս անգամ, հատկապես Արցախի կորստից հետո, նույն մոտեցումն այլեւս չի աշխատելու: Այսօր թե՛ ներքաղաքական, թե՛ աշխարհաքաղաքական գործընթացները շատ ավելի խորքային են, եւ գործող իշխանությունները, որքան էլ փորձեն ինքնավստահ երեւալ, իրականում մտահոգված են իրենց վերարտադրման հնարավորություններով:

- Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ եթե իրենք սահմանադրական մեծամասնություն չունենան, ապա պատերազմ է լինելու: Որպես պատերազմի մասնակից՝ ինչպե՞ս եք գնահատում այս հայտարարությունը:

- Սա քաղաքական վախեցման հայտնի մեթոդ է: Ես համոզված եմ, որ պատերազմը կանխվում է պատերազմին պատրաստվելով: Եթե պետությունը պատրաստ է, ուժեղ է եւ ունի հստակ ռազմավարություն, ապա պատերազմի հավանականությունը նվազում է: Մենք դեռ տարիներ առաջ շրջանառության մեջ էինք դրել «ազգ-բանակ» գաղափարը: Եթե 2018 թվականին մենք իշխանության մաս կազմած լինեինք, մեծ էր հավանականությունը, որ 2020 թվականի պատերազմը կամ կանխվեր, կամ գոնե այդպիսի ողբերգական ավարտ չունենար:

- Ի՞նչ խաղաղություն եք պատկերացնում Հայաստանի համար:

- Իրական եւ արժանապատիվ խաղաղության հիմքում ինքնիշխանությունն է: Առաջին հերթին պետությունը պետք է հույսը դնի իր վրա՝ իր պաշտպանունակության, իր բանակի եւ իր ժողովրդի կամքի վրա: Դաշնակիցները կարեւոր են, բայց միայն այն դեպքում, երբ դու ինքդ պատրաստ ես դիմադրելու: Պետք է գերիշխի այն գաղափարը, որ ոչ թե հողը պետք է տաս խաղաղ ապրելու համար, այլ պատրաստ լինես կյանքդ տալ հայրենիքը պահելու համար:

- Ի՞նչ եք տեսնում որպես Արցախի հիմնախնդրի վերջնական լուծում:

- Առաջին հերթին պետք է ձերբազատվել այս իշխանություններից: Արցախի վերադարձը հնարավոր է միայն այն դեպքում, երբ Հայաստանում ձեւավորվի ազգային շահերին ծառայող իշխանություն:

Պետք է զուգահեռաբար իրականացվեն երկու ուղղություններ՝

1. ճիշտ արտաքին քաղաքականություն եւ միջազգային իրավական պայքար,
2. ռազմական պատրաստվածություն եւ ուժի կիրառման պատրաստակամություն, եթե դրա անհրաժեշտությունը լինի:

Միայն այս երկու ուղղությունների համատեղ աշխատանքի դեպքում հնարավոր կլինի հասնել արդյունքի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՊ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ Է

ArmLur.am-ը ուսումնասիրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը եւ պարզել, որ 101-րդ հորիզոնականում ընդգրկված է Արազ Պապիկյանը:

Վերջինս զբաղեցնում է Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը, որը ստանձնել է 2020 թվականի փետրվարի 21-ին: Միաժամանակ նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի անդամ է:

Պաշտոնյայի՝ 2024 թվականի հայտարարագրի համաձայն՝ նա ունի համատեղ սեփականությամբ հողամաս Լոռու մարզի Բերդ համայնքում, որը ձեռք է բերվել դեռեւս 1991 թվականին:

Նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 1 միլիոն 200 հազար դրամ, իսկ կանխիկ դրամը՝ 150 հազար դրամ: Նույն տարում աշխատանքի վարձատրությունից ստացել է 11 միլիոն 809 հազար 182 դրամ եկամուտ:

2023 թվականի հայտարարագրով Պապիկյանի բանկային հաշիվներին առկա է եղել 849 հազար 189 դրամ, կանխիկ դրամը կազմել է 450 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը՝ 11 միլիոն 963 հազար 345 դրամ:

2022 թվականին նրա բանկային հաշիվներում եղել է 2 միլիոն 457 հազար 435 դրամ, կանխիկ դրամը՝ 1 միլիոն 350 հազար դրամ: Նույն տարում նա ստացել է 11 միլիոն 373 հազար 640 դրամ աշխատավարձ եւ 355 հազար 250 դրամ կենսաթոշակ՝ ընդհանուր եկամուտը կազմելով 11 միլիոն 728 հազար 890 դրամ:

Ավելի վաղ՝ 2021 թվականի հայտարարագրում, Պապիկյանի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 700 հազար դրամ, ունեցել է նաեւ 10 հազար դրամ էլեկտրոնային միջոցներ եւ 40 հազար դրամ կանխիկ գումար:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՀԱԺՈՂՈՎ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Ստամբուլում անցկացվող Միջխորհրդարանական միության 152-րդ վեհաժողովի շրջանակում ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, հանձնաժողովի անդամ Հասմիկ Հակոբյանն ու ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ծովինար Վարդանյանն ապրիլի 15-ին հանդիպել են Կանադայի պատվիրակության ղեկավար Ռոբ Օլիֆանթի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են Հայաստանի եւ Կանադայի միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերություններն ու ընդգծել բարձր մակարդակի քաղաքական երկխոսության եւ միջխորհրդարանական համագործակցության կարեւոր դերը երկկողմ հարաբերությունների զարգացման գործում: Սարգիս Խանդանյանը բարձր է գնահատել Կանադայի Խորհրդարանական կենտրոնի իրականացրած «Աջակցություն Հայաստանի խորհրդարանին» ծրագիրը՝ նշելով դրա կարեւոր նշանակությունը Հայաստանի՝ որպես նոր ժողովրդավարության կայացման եւ զարգացման համար: Քննարկվել են նաեւ տարածաշրջանային կապուղիների զարգացմանը միտված նախաձեռնությունները, մասնավորապես՝ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծի հնարավորությունները, որոնք ուղղված են Հայաստանի տարածքով բազմաձեւ տարանցիկ կապի ապահովմանը եւ նպաստում են տարածաշրջանային խաղաղության, կայունության եւ ինտեգրման ամրապնդմանը՝ հիմնված պետությունների ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության վրա:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անուշիկ Ավետյանը հանդիպել է ԱՄՆ առեւտրի դեպարտամենտի Առեւտրային իրավունքի զարգացման ծրագրի (Commercial Law Development Program, CLDP) գլխավոր իրավախորհրդատուի տեղակալ Ջմարակ Խանի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպումը կայացել է ԱՄՆ պատվիրակության՝ Հայաստան կատարած այցի շրջանակում, որի նպատակն է զարգացնել երկկողմ համագործակցությունը եւ քննարկել ծրագրային նոր ուղղություններ, հայտնում են նախարարությունից: Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են ՀՀ-ԱՄՆ համագործակցությունը մտավոր սեփականության ոլորտում՝ ընդգծելով դրա առանցքային դերը մրցունակ, նորարարական եւ գիտելիքահենք տնտեսության ձեւավորման գործում: Նշվել է, որ առկա գործակցությունը նպաստում է ներդրումային միջավայրի բարելավմանը, տեխնոլոգիաների առեւտրայնացման գործընթացի իրականացմանը եւ տնտեսական կայուն աճի ապահովմանը: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը ներկայացրել է, որ ներկայում նախարարության կողմից մշակվում է «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության ոլորտի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագիրը», որի շրջանակում նախատեսվում են համապարփակ իրավական եւ ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՐԶՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ռումինիայի արտաքին գործերի նախարար Օանա-Սիլվիա Ցոյուի հետ: Զրուցակիցները քննարկել են ՀՀ-ԵՄ գործընկերության խորացմանն ուղղված նախաձեռնություններ. ընդգծվել է ոլորտային ուղղություններով փոխգործակցության առաջ մղման հարցում երկուստեք առկա պատրաստակամությունը: Անդրադարձ է կատարվել նաեւ մայիսի սկզբին Երեւանում կայանալիք բարձրաստիճան միջոցառումներին մասնակցության հարցերին: Կարեւորվել են նաեւ երկկողմ օրակարգի շարունակական հարստացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Արարատ Միրզոյանը եւ Օանա-Սիլվիա Ցոյուն մտքեր են փոխանակել տարածաշրջանային զարգացումների շուրջ. նախարարներն ընդգծել են տնտեսական ու տրանսպորտային հաղորդակցության նախագծերի կյանքի կոչման հարցում հետաքրքրվածությունն ու ընձեռնվող առավելությունները:

ԾՐԱԳԻՐ Է ՄՇԱԿՈՒՄ

Եվրոպական միությունը մշակում է ծրագրեր՝ մոտալուտ ավիավառելիքի պակասը հաղթահարելու եւ նավթավերամշակման գործարանների արտադրությունը առավելագույնի հասցնելու համար, հայտնել են պաշտոնյաները:

Եվրոպական ավիաընկերությունները զգուշացրել են, որ Իրանի պատերազմի հետեւանքով արդեն առաջիկա շաբաթներին հնարավոր է ավիավառելիքի պակաս, ինչը կարող է խաթարել ամառային սեզոնին նախորդող ուղեւորափոխադրումները: Եվրոպան ավիավառելիքի ներմուծումներից ավելի կախված է, քան որեւէ այլ տրանսպորտային վառելիքից՝դրանց շուրջ 75 տոկոսը ստանալով Մերձավոր Արեւելքից:

Reuters-ի տեսած նախագծի համաձայն՝ հաջորդ ամսից Եվրոպական հանձնաժողովը կսկսի ԵՄ մակարդակով նավթամթերքների վերամշակման հզորությունների քարտեզագրում եւ կներդնի միջոցներ՝ «ապահովելու, որ առկա վերամշակման հզորությունները լիարժեք օգտագործվեն եւ պահպանվեն»:

ԵՄ-ն նաեւ աշխատում է ավիավառելիքի մատակարարումներին վերաբերող հատուկ միջոցառումների վրա, սակայն դրանք դեռ մշակման փուլում են, հայտնել են առաջարկներին ծանոթ պաշտոնյաները: Հանձնաժողովը հրաժարվել է մեկնաբանել նախագծային ծրագրերը, որոնք նախատեսվում է հրապարակել ապրիլի 22-ին:

ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

ԱՄՆ զինված ուժերը հայտարարել են, որ հարված են հասցրել Արեւելյան Խաղաղ օվկիանոսում գտնվող նոր նավի, որի հետեւանքով զոհվել է երեք մարդ, որոնց նրանք մեղադրում են «թմրանյութերի ապօրինի շրջանառության» մեջ: Չորեքշաբթի հայտարարված այս հարվածը վերջինն է նման տասնյակ գործողություններից, որոնք ԱՄՆ բանակը իրականացրել է վերջին ամիսներին: Այս միտումը իրավապաշտպան խմբերը քննադատում են՝ այն անվանելով «արտադատական սպանություններ»: Այս մասին հայտնում է AL-JAZEERA-ն:

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է «ԲԵՐԵԼ»

Չնայած նրան, որ հայրենի խորհրդարանում ամեն բան անում են, որպեսզի ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի նախագծերը մերժեն, հակառակ դրան՝ նա նոր նախագիծ է «բերել»:

ArmLur.am-ը պարզեց, որ Ազգային Ժողովի ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը նոր օրենքի նախագիծ է ներկայացրել՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին:

Նախագծով առաջարկվում է օրենքում ամրագրել «էլեկտրոնային հարթակ» հասկացությունը եւ սահմանել, որ նման հարթակներով իրականացվող ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների դեպքում միջնորդավճարները չեն կարող գերազանցել ծառայության արժեքի 10 տոկոսը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ վերջին տարիներին շուկան կտրուկ փոխվել է, եւ պատվերների հիմնական մասը կատարվում է բջջային հավելվածներով, ինչի արդյունքում այդ հարթակները դարձել են շուկա մուտք գործելու հիմնական գործիք եւ զգալի ազդեցություն ունեն վարորդների եկամուտների վրա: Գործնականում ձեւավորվել է իրավիճակ, երբ միջնորդավճարները հաճախ հասնում են 20-30 տոկոսի, ինչը հանգեցնում է վարորդների մաքուր եկամուտների նվազմանը եւ շուկայում անհավասարակշռության:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման բարձր միջնորդավճարները պարտադիր չեն. մի շարք հարթակներում դրանք կազմում են 5-15 տոկոս, իսկ որոշ դեպքերում կիրառվում են նույնիսկ 0 տոկոս սակագներ՝ շուկա մուտք գործելու փուլում: Միաժամանակ միջազգային կառույցները, այդ թվում՝ OECD-ն, կարեւորում են ոլորտի կարգավորումը՝ արդար մրցակցության եւ աշխատանքային պայմանների ապահովման համար:

Պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ ոլորտը Հայաստանում ունի մեծ ծավալներ. 2024 թվականին շրջանառությունը կազմել է շուրջ 36.1 միլիարդ դրամ, իսկ 2025 թվականին՝ արդեն 121.6 միլիարդ դրամ՝ աճելով շուրջ 3.4 անգամ: Նույն ժամանակահատվածում պետական տուրքի չափը կազմել է համապատասխանաբար մոտ 652.8 միլիոն եւ 3.7 միլիարդ դրամ, այսինքն՝ մոտ 4-5 տոկոս, մինչդեռ հարթակների միջնորդավճարները մի քանի անգամ ավելի բարձր են:

Նախագծով առաջարկվող 10 տոկոս սահմանը նպատակ ունի պահպանել հավասարակշռություն՝ թույլ տալով հարթակներին ստանալ զգալի եկամուտներ, բայց միաժամանակ պաշտպանելով վարորդների շահերը եւ կանխելով անհամաչափ բարձր վճարների կիրառումը:

Նախագծի ամբողջական առաջարկվող փոփոխությունը հետեւյալն է.

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում «ոչ կանոնավոր փոխադրում» հասկացությունը սահմանող պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«էլեկտրոնային հարթակ՝ էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ համացանցի միջոցով, փոխադրման պատվերների ընդունման եւ փոխանցման տեղեկատվական հարթակ»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7.1-ին մասով.

«7.1. Էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից գանձվող բոլոր վճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել ուղեւորափոխադրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը չորրորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից գանձվող բոլոր վճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել ուղեւորափոխադրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Էլեկտրոնային հարթակով բեռնափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից գանձվող բոլոր վճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել բեռնափոխադրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱԴԱԴԱՐԸ՝ ԱՅՍ ՇԱԲԱԹ

Լիբանանում հրադադարի մասին կարող է հայտարարվել շուտով եւ ուժի մեջ մտնել արդեն այս շաբաթ, հաղորդում է Financial Times (FT)-ը: Երկու աղբյուրների հղումով, հրատարակությունը հաղորդում է, որ սա, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա այն բանից հետո, երբ իսրայելական ուժերը վերահսկողություն հաստատեն Լիբանանի հարավում գտնվող Բինտ Ջբեյլ սահմանային քաղաքի նկատմամբ: Լիբանանցի անանուն պաշտոնյան թերթին ասել է, որ հրադադարը կներառի Իսրայելի հարվածների դադարեցում, բայց ոչ զորքերի դուրսբերում Լիբանանից: Միեւնույն ժամանակ, Լիբանանի կառավարության աղբյուրները հայտնել են, որ հրադադարի տեւողությունը, հավանաբար, կապված կլինի ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ գործող հրադադարի հետ: Ավելի վաղ Միացյալ Նահանգները եւ Իսրայելը պնդում էին, որ Լիբանանի վրա հարվածների դադարեցումը չի ներառվել Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ կնքված համաձայնագրում: Իրանի եւ Պակիստանի պաշտոնյաները, որոնք միջնորդում են բանակցությունները, հակառակն են հայտարարել:

ԱՃՈՂ ՃԳՆԱԺԱՄ

Հորմուզի նեղուցի փակումը՝ ԱՄՆ-Իսրայել-Իրան հակամարտության հետեւանքով, առաջացրել է ավիավառելիքի աճող ճգնաժամ, եւ փորձագետները զգուշացնում են «համակարգային» պակասի մասին արդեն մայիս կամ հունիս ամիսներին: Լինելով խաղաղ ժամանակներում համաշխարհային նավթի մատակարարումների շուրջ 20 տոկոսի հիմնական ուղին՝ նեղուցի փակումը հատկապես սպառնում է Ասիային եւ Եվրոպային: Թեեւ Եվրոպական հանձնաժողովը հայտնում է, որ վառելիքի լիակատար սպառման ապացույցներ չկան, խոսնակ Աննա-Կայսա Իտկոնենը նշել է, որ մատակարարման խնդիրները մոտալուտ են:

Rystad Energy-ը եւ Միջազգային էներգետիկ գործակալությունը (IEA) կանխատեսում են, որ չվերթների չեղարկումները կարող են սկսվել արդեն մայիսին:

IEA-ն իր վերջին ամսական զեկույցում նախազգուշացրել է, որ եթե Եվրոպան չկարողանա ապահովել Մերձավոր Արեւելքից կորցրած մատակարարումների ավելի քան 50 տոկոսը, ապա պաշարները հունիսին կհասնեն կրիտիկական՝23 օրվա մակարդակի:

ՏՀՋԿ Եվրոպայի տարածաշրջանը ներառում է Եվրամիության երկրները եւ այլ պետություններ, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան եւ Նորվեգիան: Տվյալների համաձայն՝ այս տարածաշրջանը ներմուծում է իր ավիավառելիքի ավելի քան 30 տոկոսը, հիմնականում Հորմուզի նեղուցով: Այս մասին հայտնում է AL-JAZEERA-ն:

«BERETTA» «TT»

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՏՐՃԱՆԱԿԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԽԼԵԼ

Աժ նախկին պատգամավոր Մկրտիչ Մկրտչյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության՝ ՀՀ վարչապետի 20.05.2002թ.-ի թիվ 302 որոշմամբ Մկրտիչ Էմիլի Մկրտչյանին պարգևատրված անվանական զենքը՝ «BERETTA» մակնիշի ատրճանակը եւ ՀՀ Երկրապահ կամավորական միության գործունեությանն ակտիվորեն մասնակցելու համար ՀՀ վարչապետի թիվ 548-Ա որոշմամբ Մկրտիչ Էմիլի Մկրտչյանին պարգևատրված «TT» մակնիշի ատրճանակը մալելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին:



ՆԳՆ ոստիկանությունը վերջին շրջանում փուլ առ փուլ ուսումնասիրում է քաղաքացիներին պատկանող զենքերի փաստաթղթերը եւ անգամ օրինական հիմքով ձեռք բերված զենքերի դեպքում պահանջում է դրանք հանձնել կամ ենթարկում է տեխնիկական վնասման՝ օգտագործման համար անպիտան դարձնելու նպատակով: Այս գործընթացը վերաբերում է ոչ միայն շարքային քաղաքացիներին, այլեւ պետական բարձր պաշտոն զբաղեցրած անձանց:

«Զենքի մասին» 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով զենքով պարգեւատրված անձինք մինչեւ 2025 թվականի հունիսի 1-ը պարտավոր են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանություն ներկայացնել տվյալ անձի մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների բացակայությունը հավաստող բժշկական փաստաթղթեր եւ զենքի հետ կապված անվտանգության կանոնների իմացության տեսական եւ գործնական քննությունները հանձնելու մասին փաստաթուղթ: Սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում զենքը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանությունը մալում է եւ վերադարձնում տիրոջը: Դատելով իրավիճակից՝ բոլոր նրանք, որոնք օրենքի այս կետերին չեն ենթարկվում կամ չեն համապատասխանում, նրանց պատկանող զենքերը առգրավվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

10 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (ՔՊ) նախընտրական ցուցակում ընդգրկվել են նաեւ 10 այլազգի ներկայացուցիչներ: Բանն այն է, որ ՀՀ Սահմանադրությամբ պարտադիր է ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունը:

Հիշեցնենք, որ արդեն հայտնի է՝ հունիսի 7-ին նախատեսված խորհրդարանական ընտրությունների համար ՔՊ նախընտրական ցուցակը ներկայացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ):

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՔՊ ցուցակում ներառված են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Մասնավորապես՝

- եզդիական համայնքից՝ Ռուստամ Բաքոյան եւ Նամատ Նամաթյան,
- ռուսական համայնքից՝ Ալեքսեյ Սանդիկով, Վալերի Շչուկին եւ Աննա Սանդիկովա,
- ասորական համայնքից՝ Արսեն Միխայելով, Ֆելիքս Միրզոեւ եւ Կոնստանտին Իվանով,
- քրդական համայնքից՝ Կնյազ Հասանով եւ Ռոման Ահմեդով: Նշենք, որ այժմ ՔՊ խմբակցության պատգամավորներ են Ռուստամ Բաքոյանը, Ալեքսեյ Սանդիկովը, Կնյազ Հասանովը:

Ս. Գ.

ՀՆՉՈՒՄ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» հաղորդում է ներկայացրել ՀՀ դատախազություն՝ համացանցում տարածված տեսանյութերի առնչությամբ, որտեղ առերեւույթ հնչում են արցախահայերի նկատմամբ ատելության խոսք, ներառյալ՝ նրանց ՀՀ-ից հեռացնելու հրապարակային կոչեր:

ՀԿ-ի գնահատմամբ՝ ներկայացված արտահայտությունները կարող են պարունակել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով նախատեսված ատելության եւ թշնամանքի հրահրման հատկանիշներ, 330-րդ հոդվածով նախատեսված բռնության հրապարակային կոչի տարրեր:

Ներկայացված հաղորդմամբ հիմնավորվել է վերը նշված հանցակազմերի առերեւույթ առկայությունը տեսանյութերում, դրանով միջնորդել ենք ձեռնարկել անհրաժեշտ գործողությունները՝ տեսանյութում հանդես եկող անձի ինքնությունը պարզելու եւ ներկայացված հանգամանքների առթիվ քրեական վարույթ նախաձեռնելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ ԻՆՉ Է ԱՍԵԼ

ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի որդու գործով նախաքննության ավարտ է հայտարարվել եւ գործը ուղարկվել է դատարան:

Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2022 թվականի մայիսի 2-ից հաշվառված լինելով ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատի Երեւանի թիվ 2 զինվորական կոմիսարիատում եւ ենթակա լինելով զորակոչման 2025 թվականի ձմեռային զորակոչին, 2026 թվականի հունվարի 23-ին ներկայացել է զինվորական կոմիսարիատ եւ հայտնել, որ հրաժարվում է ներգրավվել զորակոչային միջոցառումներին՝ այդ կերպ խուսափելով հայտարարված պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային զորակոչից՝ այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Նշենք, որ գործը դատարանում մակագրվել է դատավոր Գարիկ Աբելյանին:

Ք. Մ.

ԹՈՒՅԼԱՏՐՎԵԼ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ

ՄԻՊ ձեռնարկած միջոցների արդյունքում փաստաբաններին թույլատրվել է մուտք գործել Հակակոռուպցիոն կոմիտե, իրացնել անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: «Ի պատասխան լրատվամիջոցների հարցումների՝ տեղեկացնում ենք, որ ապրիլի 16-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ստացել է մի քանի ահազանգեր փաստաբաններից առ այն, որ իրենց վստահորդներին արգելանքի են վերցրել եւ տեղափոխել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, սակայն նրանց վստահորդներին տեսակցելու եւ պատշաճ իրավաբանական օգնություն ապահովելու հնարավորություն չի տրվում:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կողմից ձեռնարկված միջոցների եւ քննչական մարմնի հետ քննարկումների արդյունքում Պաշտպանի հաստատություն դիմած փաստաբաններին թույլատրվել է մուտք գործել Հակակոռուպցիոն կոմիտեի շենք եւ իրացնել անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է հետեւել գործընթացին եւ հարկ է համարում կրկին ընդգծել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի առանցքային բնույթն ու դրա պատշաճ երաշխավորման կարեւորությունը ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի իրավունքների ապահովման տեսանկյունից»:

- *Ապրիլի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հոգեկան ներգործության 9 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՌԱՑԵԼ ԵՆ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ 2023 թ. աշնանը Արցախից բռնագաղթածներից Տավուշում բնակություն է հաստատել 2970 անձ (780 ընտանիք): 2025թ. սկզբին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել այդ ժամանակ Տավուշում բնակվող արցախցիների թվի վերաբերյալ: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում 2025 թվականի հունվարի 8-ի դրությամբ կա ԼՂ-ից բռնի տեղահանված 564 ընտանիք (1920 անձ)»: 2024թ. դեկտեմբերին Տավուշի մարզպետարան հարցում էի կատարել մարզում հաստատված արցախցիների վերաբերյալ: Այն ժամանակ մարզպետարանից հայտնել էին, որ Տավուշում բնակվող, բռնագաղթած արցախցիներից աշխատանք ունի ընդամենը 36-ը: 2024թ. դեկտեմբերին Արցախից բռնագաղթածները մարզում սեփականության իրավունքով բնակարաններ չէին գնել:

2026թ. ապրիլի 6-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական նոր հարցում եմ կատարել. «Ապրիլի 6-ի դրությամբ Տավուշի մարզում Արցախից բռնագաղթած քանի՞ անձ է բնակվում, քանի՞ ընտանիք, նրանցից քանի՞սն է պետական բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերել մարզում, ո՞ր համայնքներում՝ քանի՞ բնակարան»: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում բնակվում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված 1860 անձ (527 ընտանիք): Պետական բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերած ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմնին»: Մարզպետ Հայկ Ղալումյանը պարտավոր է հայտնել, թե որն է այդ խնդրով պետական լիազոր մարմինը: Տավուշի մարզպետն ու մարզպետի աշխատակազմը պետական բյուջեից միլիոնավոր դրամների պարգեւավճարներ են ստանում, սակայն մարզպետը չգիտի կամ չի հայտնում, թե քանի բռնագաղթած արցախցի ընտանիք է Տավուշի մարզում բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերել: Լրագրողիս ունեցած տեղեկություններով՝ ընդամենը 10 արցախցի ընտանիք է նշված ծրագրով բնակարան գնել Տավուշի մարզի Նոյեմբերյան եւ Իջեւան համայնքներում: Դա այն դեպքում, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, թե Հայաստանի Հանրապետությունում պետք է ղարաբաղցիներին տնավորել: Հետաքրքիր է, որ Նիկոլ Փաշինյանի կոչով 2020թ. հոկտեմբերի 22-ին Արցախ մարտնչելու համար կամավորագրվելու կոչ արած, « Իջեւան» կամավորական ջոկատ հավաքած, սակայն այդպես էլ Արցախ, պատերազմ չմեկնած Հայկ Ղալումյանը այժմ վախենում է «Արցախ» բառն օգտագործել, դրա փոխարեն նշելով՝ Լեռնային Ղարաբաղ: Արցախի հայաթափումից հետո՝ անցած 2 տարի 7 ամսում, Տավուշից հեռացել է 1110 արցախցի (253 ընտանիք): Ահա այսպիսի «հոգատարությամբ» է իշխանությունը վերաբերում Տավուշում բնակություն հաստատած արցախցիներին, որ նրանք, բնակարան ու աշխատանք չունենալով, ստիպված հեռանում են Տավուշից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԱՏՎԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական՝ e-draft.am կայքում տեղադրված նախագիծը եւ պարզել, որ ԿԳՄՍ նախարարությունը շրջանառության մեջ է դրել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման նոր համակարգ ներդնելու առաջարկ:

Նախագծի հանրային քննարկման ժամկետներն են 2026 թվականի ապրիլի 10-ից մինչեւ ապրիլի 26-ը: Առաջարկվող փոփոխություններով սահմանվում է, որ աշխարհի առաջատար բուհերում սովորող ՀՀ քաղաքացիները կարող են ստանալ տարկետում՝ եթե ընդունվել են Academic Ranking of World Universities-ի (Shanghai Ranking) առաջին 50-յակում ընդգրկված համալսարաններ: Տարկետումը տրամադրվում է բակալավրիատի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի ծրագրերով ուսումնառության ամբողջ ժամկետով՝ առավելագույնը մինչեւ 26 տարեկանը:

Նախագծով նաեւ ներդրվում է նոր մեխանիզմ. ուսումը ավարտելուց հետո քաղաքացիները կարող են եւս մեկ տարկետում ստանալ՝ պայմանով, որ առնվազն 3 տարի աշխատեն Հայաստանում՝ կառավարության կողմից սահմանված ոլորտներում: Այդ ոլորտներն են՝ հանրային կառավարում, կրթություն եւ գիտություն, բարձր տեխնոլոգիաներ, արդյունաբերություն, առողջապահություն, ֆինանսական եւ ռազմարդյունաբերական ոլորտներ:

Միաժամանակ սահմանվում են խիստ պահանջներ. տարկետում ստացած քաղաքացիները պարտավոր են յուրաքանչյուր տարի ներկայացնել ուսումնառությունը շարունակելու մասին փաստաթուղթ, իսկ աշխատելու հիմքով տարկետման դեպքում՝ տարեկան առնվազն 183 օր գտնվել Հայաստանում: Պարտավորությունները չկատարելու դեպքում տարկետումը դադարեցվում է, եւ քաղաքացին ենթակա է զորակոչի:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ փոփոխությունների նպատակն է գործող տարկետման համակարգի կատարելագործումը եւ դրա նպատակային ուղղորդումը՝ արտասահմանում կրթություն ստացող քաղաքացիների վերադարձը Հայաստան ապահովելու համար: Նշվում է նաեւ, որ առաջատար համալսարաններում մեկ մասնագետի կրթությունը կարող է արժենալ մինչեւ 250,000-350,000 դոլար (օրինակ՝ ԱՄՆ-ում), եւ առաջարկվող համակարգը հնարավորություն կտա բարձր մասնագիտական ունակություններ ունեցող կադրերը ներգրավել Հայաստանի գիտության, տնտեսության եւ պետական կառավարման ոլորտներում՝ առանց պետական լրացուցիչ ֆինանսական բեռի: Նախագծի ընդունման դեպքում նաեւ նախատեսվում է, որ սահմանված պայմանները կատարած քաղաքացիները կարող են ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱԽՎԱԾ Է ԹԵՀՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Իրանը ԱՄՆ-ի հետ բանակցությունների հաջորդ փուլի վերաբերյալ որոշում կկայացնի Պակիստանի բանակի հրամանատար, ֆելդմարշալ Ասիմ Մունիրի գլխավորած պատվիրակության հետ հանդիպումից հետո: Իրանական աղբյուրը հայտնել է, որ պակիստանյան պատվիրակության՝ իրանցի պաշտոնյաների հետ բանակցություններից հետո Թեհրանը կանցկացնի անհրաժեշտ քննարկումներ, որից հետո միայն կորոշվի՝ երբ եւ ինչ ձեւաչափով կկայանա Իրան-ԱՄՆ բանակցությունների հաջորդ փուլը: Նշվում է նաեւ, որ Լիբանանում հրադադարը կարող է «դրական ազդակ» հանդիսանալ Իրանի որոշման համար:

Աղբյուրը շեշտել է, որ ԱՄՆ-ը պետք է հավատարիմ մնա բանակցությունների տրամաբանական շրջանակին եւ խուսափի գործընթացը խոչընդոտող քայլերից՝ այդ թվում՝ չափազանցված պահանջներից կամ նախապես ստանձնած պարտավորությունների խախտումից:

Միաժամանակ ամերիկյան լրատվամիջոցները հայտնում են, որ ԱՄՆ-ը պատրաստակամ է սկսել բանակցությունների նոր փուլը, սակայն իրանական կողմը ընդգծում է, որ դրա համար Վաշինգտոնը պետք է պահպանի որոշ սկզբունքներ:

Պակիստանի բանակի հրամանատար Ասիմ Մունիրը Թեհրան է ժամանել բարձրաստիճան քաղաքական-անվտանգային պատվիրակության գլխավորությամբ՝ փոխանցելու ԱՄՆ ուղերձը եւ նախապատրաստելու բանակցությունների հաջորդ փուլը:

Պատվիրակության կազմում ընդգրկված են արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ, անվտանգության կառույցների պաշտոնյաներ եւ տեխնիկական փորձագետներ: Նրանք չորեքշաբթի ժամանել են Թեհրան:

Այցի շրջանակում նախատեսվում են հանդիպումներ իրանական բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչիի հետ:

Ա. Վ.

ԿՄԵԿՆԻ ԱՄՆ

Պակիստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ասիմ Մունիրը Թեհրան կատարած այցից հետո կմեկնի Միացյալ Նահանգներ՝ ԱՄՆ-Իրան հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերի շրջանակներում, հաղորդում է AL JAZEERA -ն՝ հղում անելով իր աղբյուրին:

Ֆելդմարշալ Ասիմ Մունիրը եւ Պակիստանի ներքին գործերի նախարար Մոհսին Նաքվին գտնվում են Իրանում՝ Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերը շարունակելու համար: Իրանի պետական հեռարձակողի հաղորդմամբ՝ հինգշաբթի օրը իրանցի պաշտոնյաները պլանավորում են Թեհրան այցելող պակիստանյան պատվիրակության հետ մանրամասն քննարկել իրանա-ամերիկյան բանակցությունների ընթացքը եւ ԱՄՆ առաջարկները:

Ապրիլի 11-ին ԱՄՆ-ն եւ Իրանը Իսլամաբադում անցկացրել են մի քանի փուլով բանակցություններ: Թեհրանի եւ Վաշինգտոնի տվյալներով՝ կողմերը չեն կարողացել համաձայնության գալ հակամարտության երկարաժամկետ կարգավորման շուրջ՝ մի շարք տարաձայնությունների պատճառով:

ԱՆՀԵՏԱՑԵԼ Է

Ինդոնեզիայի Արեւմտյան Կալիմանտան նահանգում ութ մարդ տեղափոխող ուղղաթիռը անհետացել է ռադարներից, հաղորդում է Agence France-Presse-ը՝ հղում անելով տեղական որոնողական-փրկարարական գործակալությանը: Ըստ գործակալության՝ տեղական Matthew Air Nusantara ավիաընկերությանը պատկանող ուղղաթիռը թռչում էր տարածաշրջանի քաղաքների միջեւ: Օդանավի հետ կապը կորել է թռիչքից կարճ ժամանակ անց: Օդանավում եղել են անձնակազմի երկու անդամ եւ վեց ուղեւոր: Ինդոնեզիայի իշխանությունները մոտ 20 փրկարար են ուղարկել այն տարածք, որտեղ, ենթադրաբար, տեղի է ունեցել անհետացումը: Գործողությանը մասնակցել է նաեւ Ինդոնեզիայի ռազմաօդային ուժերի ուղղաթիռը:

● *Ըստ վիճակագրության՝ ապրիլի 14-ից 15-ը բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 7 դեպք:*

ԱՃՈՒՐԴ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

«Յունիբանկ» ԲԲԸ աճուրդի մասին հրապարակային ծանուցում

2026թ-ի մայիսի 5-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 19 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 9.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.3գր), որից 3.6գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 3.3գր) 500 հարգի՝ 92.500 ՀՀ դրամ, 6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 900 հարգի՝ 302.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 395.200 ՀՀ դրամ: Թիվ 20 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 112.100 ՀՀ դրամ: Թիվ 21 լոտ՝ ոսկյա ջարդոն 6.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 5.4գր), որից 3.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.5գր) 500 հարգի՝ 70.000 ՀՀ դրամ, 3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.9գր) 585 հարգի՝ 95.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 165.100 ՀՀ դրամ: Թիվ 22 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 26.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 25.2գր), որից 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 5.2գր) 500 հարգի՝ 145.700 ՀՀ դրամ, 20.2գր(զուտ քաշը 20գր) ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝655.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 801.500 ՀՀ դրամ: Թիվ 23 լոտ՝ոսկյա ջարդոն 7.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.4գր), որից 5.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝284.600 ՀՀ դրամ, 2.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.1գր) 585 հարգի՝ 68.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 353.400 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Տեղեկատու հեռ.՝+374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԴԱՐՁԵԼ Է «ԱՐԱՐԱՏ»-Ի ՏԻՏՂՈՍԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

Ֆասթ Բանկը վերսկսել է գործակցությունն «Արարատ» ֆուտբոլային ակումբի հետ եւ հանդես է գալիս որպես ակումբի տիտղոսային հովանավոր: Հպարտության խորհրդանիշ դարձած «Արարատ-73»-ը բարձր նշաձող է սահմանել հայկական ակումբային ֆուտբոլի համար, եւ այսօր ակումբն ու Ֆասթ Բանկը միավորել են ուժերը՝ նոր վերընթաց գրանցելու համար:

Ֆասթ Բանկի մանրածախ բիզնեսի կառավարման տնօրեն, տնօրինության անդամ Տիգրան Սարգսյանն ասել է. «Մեզ համար հպարտություն է վերսկսել գործընկերությունն ակումբի հետ, որը գրել է հայկական սպորտի ամենափառահեղ էջերը: Ֆասթ Բանկի համար միեւնույն ժամանակ կարեւոր է լինել ակումբի կողքին ոչ միայն նվաճումները նշելիս, այլեւ իսկական պայքարի եւ նոր նպատակների ձեւավորման շրջանում»:

«Արարատը» հաջողություններ է գրանցել նաեւ անկախ Հայաստանի պատմության մեջ՝ մեկ անգամ դառնալով չեմպիոն եւ սուպերգավաթակիր: Այսօր պորտուգալացի գլխավոր մարզիչ Ռիկարդո Դիոնիսիոյի գլխավորությամբ թիմը փնտրում է նոր տակտիկական լուծումներ, ցուցաբերում համառություն եւ քայլ առ քայլ շարժվում դեպի նոր հաղթանակներ:

«Շատ ուրախ ենք, որ Ֆասթ Բանկը եւս մեկ անգամ հանդիսանալու է մեր տիտղոսային հովանավորը: Այս համագործակցությունը շատ կարեւոր քայլ է մեր ակումբի զարգացման եւ ռազմավարության շրջանակներում: Մենք շատ ենք կարեւորում այն եւ կարծում ենք, որ այն նոր հնարավորություններ կստեղծի ինչպես մեր ակումբի, այնպես էլ մեր երկրպագուների համար», - նշել է «Արարատ» ՖԱ գործադիր տնօրեն Տիգրան Ղարաբաղցյանը:

Հավելենք, որ Ֆասթ Բանկում կարեւորում են ֆուտբոլի զարգացումն ու առաջընթացը՝ հետեւողական ներդրումներ կատարելով այս ոլորտում:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԲԱՆԿԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵՔ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ

Հաճախակի ճանապարհորդող եւ հարմարավետությունն ու լրացուցիչ արտոնությունները գնահատող անձանց Յունիբանկն առաջարկում է Mastercard World «Travel» քարտեր:

Յունիբանկի Mastercard World «Travel»-ը բազմարժութային քարտ է, որին կցված է երեք արժույթ՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար եւ եվրո, ինչը այն դարձնում է հատկապես հարմար եւ շահավետ արտասահմանում վճարումների համար:

Հատուկ ուշադրություն է դարձվում օդանավակայանում հաճախորդի հարմարավետությանը: Lounge Key-ի միջոցով քարտն անվճար մուտք է ապահովում բիզնես սրահներ. տարեկան մինչեւ 6 այցելություն քարտապանի եւ նրա հյուրերի համար: Հասանելի է նաեւ Fast Track ծառայությունը:

Քարտապանները նաեւ ստանում են լրացուցիչ արտոնություններ, այդ թվում՝ շուրջօրյա կոնսիերժ ծառայություն, 1 ԳԲ անվճար ռոումինգ Ինտերնետ եւ 20% զեղչ այլ ռոումինգային փաթեթների համար:

Mastercard World «Travel» քարտապաններն ունեն գործարքների բարձր օրական սահմանաչափ՝ մինչեւ 8 միլիոն ՀՀ դրամ, քանակը՝մինչեւ 20 գործարք: Հաճախորդներին տրամադրվում է մոբայլ հավելված բանկային գործարքներն առանց բանկ այցելելու կատարելու համար, ինչպես նաեւ SMS ծանուցումների ստացման հնարավորություն յուրաքանչյուր գործարքի համար:

Ի դեպ՝ներկայումս իրականացվող ակցիայի շրջանակներում շաբաթ-կիրակի օրերին «Դալմա» եւ «Գարեգին Նժդեհ» մասնաճյուղերում Mastercard World «Travel» քարտերը կարելի է ձեւակերպել 50% զեղչով:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԵՐԵՎԱՆ, 15.04.2026թ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հայտարարում է Հրանտ Հակոբյանի նշանակման մասին՝ որպես Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ:

Հրանտ Հակոբյանը 2019 թվականի օգոստոսից զբաղեցրել է գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը, իսկ 2017 թվականի փետրվարից՝ ֆինանսական տնօրենի: Նա միացել է Կոնվերս Բանկին 2011 թվականին՝ որպես գլխավոր գործադիր տնօրենի խորհրդական, զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ:

Մինչ Կոնվերս Բանկին միանալը, աշխատել է Corporacign America ընկերությունում (Բուենոս Այրես): Նա ունի տնտեսագիտության բակալավրի աստիճան Բուենոս Այրեսի համալսարանից, ինչպես նաեւ բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան՝ Կոլումբիայի համալսարանից: Հրանտ Հակոբյանը նաեւ BACEE-ի (Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի բանկային ասոցիացիա) տնօրենների խորհրդի անդամ է:

Կոնվերս Բանկը շարունակում է հավատարիմ մնալ իր ռազմավարության հետեւողական իրականացմանը, Հայաստանի ֆինանսական համակարգում դիրքի ամրապնդմանը, հաճախորդների հետ հարաբերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաեւ պրոդուկտների, ծառայությունների եւ տեխնոլոգիական հնարավորությունների շարունակական առաջխաղացմանը:

Կոնվերս Բանկի մասին

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որը գործում է Հայաստանի Հանրապետությունում եւ առաջարկում է բանկային ծառայությունների լայն շրջանակ՝ ֆիզիկական անձանց, փոքր եւ միջին ձեռնարկություններին, ինչպես նաեւ կորպորատիվ հաճախորդներին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՆԿԱՏԵԼ ԵՆ ՄԻԱՍԻՆ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ

Քիմ Քարդաշյանի եւ Լյուիս Համիլթոնի շուրջ ֆնարկումները վերջին օրերին նոր թափ են հավաքել՝ հատկապես նրանց միասին Լոս Անջելեսում տեսնելուց հետո:

Զույգին նկատել են քաղաքի բարձրակարգ դիզայներական խանութներից մեկում, որտեղ նրանք, ըստ ականատեսների, երկար ժամանակ անցկացրել են՝ ընտրելով շքեղ գորգեր եւ տան ինտերիերի տարրեր: Այս դետալը երկրպագուների համար բավականին խոսուն է դարձել. շատերը վստահ են, որ սա պարզապես պատահական գնում չէ, այլ հնարավոր համատեղ կյանքի նախապատրաստության նշան:

Նրանց պահվածքն ու ընդհանուր մթնոլորտը նույնպես ուշադրությունից չեն վրիպել: Ականատեսները նշում են, որ Քիմն ու Լյուիսը շփվում էին շատ ազատ ու ջերմ, հաճախ ծիծաղում էին եւ կարծես լիովին ներդաշնակ էին միմյանց հետ: Նրանց հագուստի ընտրությունն էլ էր խոսուն. երկուսն էլ նախընտրել էին բաց, մեղմ գույներ, ինչը շատերի կարծիքով խորհրդանշում էր նրանց հարաբերությունների հանգիստ ու հավասարակշռված բնույթը:

Լյուիս Համիլթոնը, որը 41 տարեկան է, ընտրել էր պարզ, բայց նուրբ համադրված կերպար՝ կրեմագույն կայծակաճարմանդով սվիտեր եւ գունաթափված, ազատ ջինսեր: Նրա ոճը համադրվում էր Քիմ Քարդաշյանի էլեգանտ, բայց միեւնույն ժամանակ առօրյա կերպարի հետ: Քիմը, որը 45 տարեկան է, հավատարիմ էր մնացել իր բրենդային ոճին՝ կրելով բաց մոխրագույն բաճկոն, SKIMS-ի հաստ լեգինսներ, թափանցիկ բարձրակրունկներ եւ շքեղ Gucci պայուսակ: Նրա կերպարը լրացնում էին մեծ սեւ արեւային ակնոցները, որոնք վաղուց դարձել են նրա այցեքարտերից մեկը:

Թեեւ Քիմն ու Լյուիսը տարիներ շարունակ հայտնի են որպես մտերիմ ընկերներ, նրանց հնարավոր սիրավեպի մասին լուրերը սկսեցին ակտիվորեն շրջանառվել միայն այս տարվա սկզբին: Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ նրանք միասին նկատվել էին Եվրոպայում՝ հատկապես Անգլիա եւ Ֆրանսիա կատարած ուղեւորությունների ընթացքում: Այդ ժամանակից ի վեր նրանց յուրաքանչյուր համատեղ հայտնվելը հանրության ուշադրության կենտրոնում է հայտնվում:

Վերջին շաբաթներին այդ լուրերը կրկին ուժգնացել են, հատկապես այն բանից հետո, երբ զույգը միասին մասնակցել է Coachella փառատոնին Կալիֆոռնիայում: Նրանք նկատվել են հանդիսատեսի շարքերում՝ վայելելիս Ջասթին Բիբեր-ի ելույթը, ինչը եւս մեկ անգամ բորբոքել է նրանց հարաբերությունների վերաբերյալ քննարկումները:

Չնայած պաշտոնական հաստատում դեռ չկա, երկրպագուներն ու լրատվամիջոցները շարունակում են հետեւել նրանց յուրաքանչյուր քայլին: Եթե այս միտումը շարունակվի, չի բացառվում, որ մոտ ապագայում Քիմ Քարդաշյանն ու Լյուիս Համիլթոնը վերջապես հրապարակավ խոսեն իրենց հարաբերությունների մասին: Մինչ այդ, նրանց յուրաքանչյուր համատեղ ելույթ շարունակում է նոր հարցեր եւ հետաքրքրություն առաջացնել հանրության շրջանում:

ՊԱՅԹԵՅՐԵԼ Է ՍՈՑՑԱՆՑԵՐԸ

Ավստրալացի ազդեցիկ անձնավորություն եւ մոդել Լիա Հալթոնը անակնկալ ասող է դարձել այս տարվա Coachella փառատոնում: Նրա հայտնվելը ֆնարկումների ալիք է առաջացրել սոցիալական ցանցերում, որտեղ օգտատերերը բառացիորեն նրան ողողել են հաճոյախոսություններով:



25-ամյա բլոգերին արդեն անվանել են «աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը» եւ «Coachella-ի թագուհին»: Փառատոնի վիրուսային տեսանյութերն ու լուսանկարները ակնթարթորեն տարածվել են TikTok-ում եւ Instagram-ում՝ հավաքելով միլիոնավոր արձագանքներ:

Շատ օգտատերեր հիացմունք եւ նույնիսկ կասկածներ են հայտնել նրա արտաքին տեսքի իսկության վերաբերյալ. «Ոչ, նա նման է արհեստական բանականության. անհնար է այդքան կատարյալ լինել», - գրել են մեկնաբանները:

Վիրուսային ճանաչում եւ միլիոնավոր հետեւորդներ

Հալթոնը ճանաչում է ձեռք բերել 2024 թվականին՝ վիրուսային շրթունքների սինխրոնացման տեսանյութից հետո, եւ այսօր նա ունի ավելի քան 22 միլիոն հետեւորդ սոցիալական ցանցերում:

Coachella-ում նա ներկայացել է մի քանի աչքի ընկնող կերպարներով՝ փառատոնային բացահայտ հագուստներից մինչեւ ավելի դասական բոհո կերպարներ: Նրա յուրաքանչյուր ելույթ նոր քննարկումներ է առաջացրել համացանցում: Սոցիալական ցանցերի օգտատերերը նրան անվանել են «պատկերակ» եւ «Coachella-ի թագուհի»՝ նշելով, որ նա «գերազանցեց նույնիսկ հոլիվուդյան աստղերին», այդ թվում՝ այնպիսի հյուրերի, ինչպիսիք են Քայլի Ջենները եւ Հեյլի Բիբերը: Հալթոնի ժողովրդականության աճից հետո նրան սկսել են համեմատել ֆրանսիացի մոդել Թիլան Բլոնդոյի հետ, ում մանկուց անվանում են «աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը»: Նրա լուսանկարների եւ տեսանյութերի տակ մեկնաբանությունները լի են ոգեւորված արձագանքներով՝ սկսած «անհնարին կերպով կատարյալից» մինչեւ «դեմք, որը չի կարող իրական լինել»:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Լեհաստանի Կատովիցե քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում տեղի են ունեցել 8-րդ տուրի պարտիաները: Միանձնյա առաջատարն է իսպանացի գրոսմայստեր Դավիդ Անտոն Գիխարոն՝ 7 միավորով: Հայ գրոսմայստերներ Հայկ Մարտիրոսյանը եւ Ռոբերտ Հովհաննիսյանը ունեն 6-ական միավոր եւ բաժանում են 11-27-րդ տեղերը: Հայ շախմատիստներից 5.5-ական միավորով 28-77-րդ տեղերն են բաժանում գրոսմայստերներ Շանթ Սարգսյանը, Էմին Օհանյանը եւ Արթուր Դավթյանը: Գրոսմայստերներ Մամիկոն Ղարիբյանը, Մանուէլ Պետրոսյանը, միջազգային վարպետներ Արսեն Դավթյանը եւ Վահե Սուքիասյանը, նաեւ ՖԻԴԵ-ի վարպետ Տիգրան Համբարձումյանը ունեն 5-ական միավոր միավոր:

Գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանը ունի 4.5 միավոր: Նույնքան միավոր ունեն նաեւ միջազգային վարպետ Ռոբերտ Փիլիպոսյանը եւ ՖԻԴԵ-ի վարպետ Հայկ Երիցյանը:

9-րդ խաղափուլը տեղի կունենա ապրիլի 16-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 17:00-ին: Առաջնության ավարտին մնացել է երեք խաղափուլ:

ԿԱՋՄԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Եգիպտոսի Իսմայիլիա քաղաքում մայիսի 2-8-ը կայանալիք ծանրամարտի երիտասարդների Աշխարհի առաջնությունում Հայաստանի հավաքականները մեծ կազմով են ելույթ ունենալու:

Աղջիկների թիմում Արտաշես Ներսիսյանի գլխավորությամբ հանդես են գալու Մերի Միսակյանը (69 կգ), Աննա Ամրոյանը (77 կգ) եւ Էմմա Պողոսյանը (86 կգ), հայտնում է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան:

Ամրոյանն ու Պողոսյանը մասնակցելու են նաեւ ապրիլի 19-26-ը Բաթումիում կայանալիք մեծահասակների Եվրոպայի առաջնությանը:

Տղաների հավաքականում Վիգեն Խաչատրյանը հայտավորել է Արտուշ Գրիգորյանին (65 կգ), Նարեկ Գրիգորյանին, Հովհաննես Հովհաննիսյանին (71 կգ), Նարեկ Մկրտչյանին (79 կգ), Վալերիկ Մովսիսյանին (94 կգ), Գրիգոր Ղազարյանին (110 կգ) եւ Գագիկ Մկրտչյանին (+110 կգ):

ԿԿԱՅԱՆԱՆ

Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչ հանդիպումների վերջին երեկոն դրամատիկ ու հետաքրքիր է ստացվել:

Մյունխենում հանդիպել են «Բավարիա»-ն ու «Ռեալ»-ը: Թիմերի առաջին դիմակայությունում 2:1 հաշվով ուժեղ էին եղել գերմանացիները, եւ «Ռեալ»-ը երեկ հենց սկզբից խաղադաշտ է դուրս եկել միայն հաղթանակի համար: Մադրիդցիներին հաջողվել է 3 գոլ խփել մրցակցի դարպասը, սակայն 86-րդ րոպեին մնացել են 10, իսկ 90+5-ին՝ 9 հոգով: «Բավարիա»-ն էլ խփել է չորս գնդակ ու հաղթել ընդհանուր 6:4 հաշվով: Օրվա մյուս խաղում «Սպորտինգ»-ը եւ «Արսենալ»-ը գոլազուրկ ոչ-ոքի են գրանցել, ընդհանուր 1:0 հաշվով պայքարը շարունակում է լոնդոնյան թիմը:

ՉԼ-ի կիսաեզրափակիչներում միմյանց դեմ կմրցեն ՊՍԺ-«Բավարիա» եւ «Ատլետիկո»-«Արսենալ» զույգերը:

● *Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում ապրիլի 18-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Պոչատ աղվեսը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ե՞րբ է կատարողական վարույթ հարուցվում, որո՞նք են հարկադիր կատարման ենթակա ակտերը:

Սարգիս Հայրապետյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր կատարողը որոշում է կայացնում կատարողական վարույթ հարուցելու (վերսկսելու) մասին՝ պահանջատիրոջից (նրա ներկայացուցչից) հարկադիր կատարման դիմում ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում, իսկ անհապաղ կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման դիմումի հիման վրա՝ անհապաղ, եթե բացակայում են կատարողական վարույթի հարուցումը (վերսկսումը) մերժելու հիմքերը, իսկ հարկադիր կատարողի որոշումների կատարման վարույթով հարկադիր կատարողը վարույթ է հարուցում սեփական նախաձեռնությամբ (Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 37-րդ, 50-րդ հոդվածներ): Հարկադիր կատարման ենթակա ակտերը սահմանված են «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով. դրանք են՝

1) քաղաքացիական, սնանկության եւ վարչական գործերով կատարում ենթադրող եզրափակիչ դատական ակտերը,

2) քրեական գործերով դատական ակտերը՝ գրավը պետության եկամուտ դարձնելու, տուգանքների, գույքային բռնագանձումների, հաշտության համաձայնությունը հաստատելու, գույքի բռնագրավման եւ գույքի արգելադրման մասով,

3) Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները՝ օրենքով նախատեսված դեպքերում,

4) միջանկյալ դատական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

5) արբիտրաժային տրիբունալների՝ դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված վճիռները կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ առանց նման թույլատրման,

6) դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված օտարերկրյա դատական ակտերը եւ օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների վճիռները,

7) ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային դատարանների եւ միջազգային արբիտրաժների ակտերը՝ այդ պայմանագրերով նախատեսված դեպքերում,

8) ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային կազմակերպության (դրա մարմինների) որոշումները՝ այդ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում,

9) դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները,

10) վարչական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

11) նոտարական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

12) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը,

13) հարկադիր կատարողի որոշումները՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում):

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Կարինե Գալստյան, 26 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական եւ այլ հայացքներից, այդ թվում նաեւ՝

1. փախստականները, կանայք, երեխաները,
2. ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձինք,
3. զինապարտները, զինծառայողները, նրանց հավասարեցված անձինք,
4. իրավաբանական անձինք,
5. խնամակալության եւ հոգաբարձության մարմինները,
6. պաշտոնատար անձինք, միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Բախվել են Mercedes-ը եւ BMW-ն: Վերջինն էլ բախվել է քարերին եւ կողաշրջված հայտնվել դաշտում. կա 6 վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 2 - 5 + 11 + 14
	Կոտայքի լեռներ	- 1 - 5 +10 + 13
	Կոտայքի նախալեռներ	+ 1 + 4 +12 + 15
	Գեղարքունիք	0 - 5 +10 + 13
	Լոռի	- 2 + 2 + 9 + 13
	Տավուշ	+ 2 + 4 + 10 + 13
	Արագածոտնի լեռներ	- 2 - 5 + 7 + 10
	Արագածոտնի նախալեռներ	0 + 4 +11 + 16

	Արարատ	+ 2 + 4 +14 + 17
	Արմավիր	+ 2 + 5 +16 + 18
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 6 + 10
	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 5 +16 + 19
	Սյունիքի լեռներ	- 1 - 4 + 7 + 10
	Սյունիքի նախալեռներ	- 2 + 2 +11 + 15
	Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +16 + 20
	Երեւան	+ 1 + 3 +15 +17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*